ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.07.2019թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/32 ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի՝

- 26-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

- 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

- 28-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրում է ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվություն՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Անձը այն հրապարակում է տեղեկագրում:

- 29-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 28-րդ կետով սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում Գնումների հետ

կապված բողոքներ քննող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

«Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 20.05.2019թ.-ին ներկայացվել է բողոք ՀՀ Ազգային ժողովի կողմից համակարգչային և ռադիո սարքավորումներ և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ քննության առնելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 20.05.2019թ. ներկայացրած բողոքը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով, 19.06.2019թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/32 որոշմամբ որոշել է «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 20.05.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ պարտավորեցնել ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնել 15.04.2019թ.-ի թիվ 3 արձանագրությամբ ընդունված «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու և 7-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 28-րդ և 29-րդ կետերի դրույթներով՝ արձանագրում եմ, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացվել պահանջվող տեղեկատվությունը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**